



ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԹԵՐԹ

Իր կրօնադատական ամեն կիրակի օրեր: Տարեկան և կանխիկ և. ամսական բաժանորդագրություն համար մեկ օտանկան ունի: Իսկ և. ամսական համար կես օտանկան ունի: Դուք գացածներուն ծախքը անհատիկ վրայ է: Երկու զարքանցած թիւեր կը ծախուի Յ. դ. Ի: Եւրոպական բաղարաց համար 30 Զրանդ: Հատը 40 փարս:

Նամակ կամ գրութիւն պէտք է ապրիլ առ Խմբագիր-Տնօրէն Մ. Կալանձեան Զինանոցը եղանակով Եւրոպական խանութի 6 և. Պիպերեան Տպարանը կամ Պանձկ պարս ջրաղաչառ Պողոս Եւ Յակոբ ուրախ խանութը: Անվան ծրար է. նամակ կը միւրծուի: Զեռագիր է. ի տրուի: Կանոնացման տուր մեկ անգամի համար 3 դ. է: Աւելի անգամներու համար անկարկուրի կըրայ:

Թիւ 13

ԿԻՐԱԿ:

1887 ՍԵՊՏԵՄԲԵՐ 13

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ազգ. Տնտեսիւն. - Առ. Գեր. Մեղիսեան զեկ' յոգիւր. - Ստեանի կեանքէն. - Պատ. ժակոն (ի՛նչ պատճառներու համար քրիստոնէութիւնն ի Հայաստան ուղ տարածեցաւ). - Ենթադրուած անօրինակ. - Զուար. ճալիք. - Զմիւռնական զործեր. - Ազգ. տուրեր. - Վ. Լ. Գ. Ժու. Գրու. - Ըստանքը զԳԼԺ 34 ուր:

ԱԶԳԱՅԻՆ

ՏԵՍՈՒԹԻՒՆ

Նոր Բաղ. Ժողովոյ ընտրութիւնը դժբաղդարար անցնող եօթնեկէն մէջ ալ չհաւատարեցաւ, որովհետեւ Ազգ. Ժողովը չկրցաւ դուրսիւ անգոյցող անձերէն պատճառաւ:

Ծառայի է անշուշտ որ նորեան է. ֆէնտիկ Վարչութեան հրամարումէն յետոյ դործունեայ Ազգ. Ժողովը տակաւին չէ կրցած նոր կարող Վարչութիւն մ'ընտրել, մինչդեռ արդի պարագայից մէջ պէտք էր որ Սմեն. Ս. Պատրիարքն ունենար իւր աջակից ու խորհրդակց ժողովը, որ պէտք էր իւր գործունեութիւն չլրատի և որպէս զի ազգային կարեւոր, հըլատապ ու արտասովոր խնդիրք ըստանան իր բանց հիմնական ըստմամբ:

Զենք հասկնար ի՛նչ տեսակ ազգասիրութիւն է մէկ կողմէ գանդատիլ իրաց փնտակէն և միւս կողմէ արգիլել դործող ձեռքն որպէս զի չգործէ, մինչդեռ ճիշդութիւն ի Հայաստան կը գործեն ամենայն փութ աշխատութեամբ և զրեկէ անոնց աղմուկի:

Խիստ դժուարացի է տեսնել որ մեր Ամեն. Ս. Պատրիարքը բնաւ ոտի չկորսնցնէր Բ. Կրան իմաստուն ուշադրութիւն հրախրելու ճիշդութեայ ջանքերուն և նոցա ազդեցութեան վրայ՝ որ բուն իսկ քաղաքական տեսութեամբ խիստ վստահուող է բարեխնամ ահրութեան խոհական շահուցը, որովհետեւ ճիշդութիւն թէպէտ արտաքսեալ Փրոնտայի հոգէն՝ սակայն նոքա (ճիշդութիւն) իւրեանց առաքելական և կրթական կրկին պաշտօններովն Թրոնտայի և այլ կաթողիկ պետութեանց գործիքներն են յարեւելի ի Թուրքիա նոցա ազդեցութիւնը բարձրացնելու, և ահա այս նպատակաւ է որ ճիշդութիւն Թրոնտայի դուրս Թրոնտայի և այլ պետութեանց պաշտպանութիւնը կը վայելեն՝ թէպէտ լինի այդ երկիր (Թրոնտա) հանրապետական:

Բ. Կուռն անշուշտ համոզեալ է այս բանին, և ի հարկէ քաջ կ'ըմբռնէ Վեհ. Սուլթանին խաղաղ և հաւատարմ հայ հայատակ ժողովրդեան Գըլխոյն՝ Ամեն. Ս. Պատրիարք Հօր գանդատները նկատմամբ ճիշդութեայ մեքենայութիւններուն և այն միջոցներուն՝ որով կը փորձուին առաւելակիւ ազդեցութիւն ձեռք բերել ի Թուրքիա:

Ազգային երախտագիտութեան արժանի է Վեհ. Սուլթանին այն հայրագործ ու ազնիւ հոգածութիւն, զոր յոյց տուաւ Ամեն. Ս. Պատրիարք Հօր խնդրանաց զբայ նաեւ ճիշդականիւրտի երաշտութեան, մարախ ու սովէ վընասեալ զիւղերու բնակչաց օգնութիւն զրկելով:

Ն. Բարձր Սրբազնութեան այս ծառայութիւն ևս ընդհանուր դժուարականութեան արժանի է, որովհետեւ ի ճիշդականիւրտ զի զաջուց մէջ կաթողիկական զիմելու մասին երեան ելած շարժումը ծագում առած է պարզապէս հացի խնդրէ և ոչ թէ խղճի թելադրութեան:

Այսպէս, կրնանք ըսել թէ Վեհ. Սուլթանին - միջնորդութեամբ մեր Ամեն. Ս. Պատրիարք Հօր - բրած հայրական խորհիւ նոյն շարժում ամուլութեան գոտապարտուած է:

Անշուշտ սակայն ամեն Հոյու նուիրական պարտականութիւնը պէտք է լինի մեր բարեգութիւն բարեպէր Վեհ. Սուլթանին մարդասիրական աղիւսօրինակին հետեւիլ՝ ըստ կարեւորն նըստատելով ամեն անոնց՝ որ դժբաղդութեան ենթարկուած են:

Այս տարրական պարտականութեան կիրառութեամբ անշուշտ ի դեռն կեննեն մարդորանկրու ջանքերը, զի նեղեալք չմնալով անխնամ և անօթի ի հարկէ չպիտի փափաղին կրոնախոսութեան դիմելու:

Այնուաղ միմիջարեան է կաղմութիւնն այն հանգանակիլ Յանձնաժողովին, որ պաշտօն ունի Զէյթունի հրկիզեալ եկեղեցիաց, փարձարանայ և ազգային կուրամայ վերաշինութեան համար գրամ հաւաքել բարեպաշտ, բարեպէր ու կրթատէր ազգայիններէ:

Այս և այսպիսի հանգանակութեանց մասնակցելու պարտաւոր են ի հարկէ ամեն Հայեր՝ ո՛ր որ ալ գըտնըին:

ի գաւառս ճիզուիթաց ջանքերն ի դերեւ հանելու գլխաւոր միջոցներէ մին ալ կրթական գործին մըում տալն է :

Այս նպատակին նպաստելու հարող են մեր կրթական Ընկերութիւնք այն է, Միջակալ, Ազգանուէր-Հայուհեաց, Դպրոցատէր-Տիկնանց և Խիզաճու Ընկերութիւնները, եթէ սոցա չգըլացուին պէտք եղած օգնութիւնները :

Եթէ գտնուեցան և կը գտնուին թերթեր որ քաջապէս ըմբռնելով այս ընկերութեանց հանրագումար նըպատակը՝ փութացին ազգայնոց համակրութիւնն հրաւիրել, դըմնուեցան և տակաւին դժբաղդաբար կը գտնուին թերթեր ալ որ կը յանդգնին ժողովրդեան վստահութիւնը խախտել ընդդէմ յիշեալ Ընկերութեանց՝ չարանկատ հրատարակութիւններով :

Պէտք է գիտնալ թէ այդ կարգի հրատարակութիւնք Ազգին տունը քանդելու և սակայն ճիզուիթաց ջանքերը պակսելու միայն կը ծառայեն :

Ուստի, այս տեսութեամբ ևս անհրաժեշտ հարկ է կրթական Ընկերութեանց առաւել եռանդեամբ նըպաստել ամեն կողմէ և ամեն տեղէ :

Գալով սա խնդրոյն թէ՛ ինչ կարգի եկեղեցականներ կրնան օգտակար հանդիսանալ ի գաւառս ճիզուիթաց և այլոց ջանքերն ի դերեւ հանելու, և թէ առ այս ուրիշ ինչ միջոցներ կան, կը խօսինք Կիրակնօրեայ Հայրենիքի յաջորդ թուով հրատարակելի Ազգ. Տեսութեան մէջ :

ԱՌ ԴԵՐ. ՄՈՒՐԱՏԵԱՆՑ

յիշմիր

Սրբազան,

Անշուշտ կը յիշէ ձեր Սրբազնութիւն Լոյսի այն յօդուածն, որով կ'առաջարկէինք Ձեզ հրաժարիլ ի Դանտի-տայութենէ, երբ Համազգային ժողովն կաթողիկոսական երկու ընտրելիներէ մին նշանակեց զՁեր Սրբազնութիւն :

Դուք որ, Սրբազան, քան զամենայն լաւ կը ճանչէիք զՌուսաստան, ուր ծնած, աճած և ուսում առած էք, Դուք որ տեղական հանգամանքները խիստ մօտէն գիտէիք և անշուշտ

չէին կրնար Ձեզ անծանօթ լինել Ռուս կառավարութեան տրամադրութիւնները՝ մանաւանդ երբ իւր Կ. Պոլսոյ Դեսպանին միջոցաւ բացէ ի բաց կը յայտարարէր թէ՛ Պալատէնիան կէտ առ կէտ պիտի դորձագործի, պարտէիք հրաժարիլ, որով ընտրութիւնը կը բեկանէր, և, հետեւաբար, ինչպէս կը նկատէք Դուք և կը նկատեն ոմանք չազգային իրաւանց բռնաբարում տեղի չէր ունենար :

Սակայն դուք, Սրբազան, - չ'ըսինք սուրիշ բան - գուցէ Ձեզ վերապահեալ նկատողութիւններով չուզեցիք յանձն առնուլ մի այնպիսի զոհողութիւն և երբ իրողութիւնն հաստատեց մեր տեսութիւնը և երբ Ազգ. ժողովն ընդունեց կատարուած իրողութիւնը, այն է ճանչցաւ Վեհ. Մակարի Պաթողիկոսութիւնը - զոր չճանչնալէ զատ ուրիշ բան չէր կրնար ընել - յուզեցիք և յղուեցաք, և յարուցուեցաւ յիշատակութեան խնդիր մ'ը որ Ազգին մէջ բաժանման վտանգ պիտի սպառնար, եթէ ուրիշ գաւառներ նոյն դժբաղդ օրինակին հետեւէին :

Դուք, Սրբազան, որ խաղաղութեան պաշտօնեայ էք, պարտէիք շնորհաւորել Վեհ. Տ. Տ. Մակար Սրբազանի Կաթողիկոսութիւնն, երբ մանաւանդ Ազգ. ժողովն ևս ճանչցաւ Ն. Վեհափառութեան Կաթողիկոսութիւնը, որով այլ ևս Ընդհանուր Հայոց աթողիկոսն կը համարուի, և փոխանակ քաջալերելու Շահպաղեանի ընթացքն, որ կատարեալ ըմբոստութիւն է Ազգ. Իշխանութեան դէմ՝ պարտէիք սանձել և ի հնազանդութիւն ածել, ինչպէս և մերժել իբրեւ կաթողիկոսի առ ձեզ շնորհաւորութիւնները, որ հարկաւ անիմաստ են, քանի որ Վեհ. Մակար Սրբազան է Ազգին Կաթողիկոսը :

Երբ Դուք, Սրբազան, օրինակ լինէիք անձնուրացութեան, երբ համեստաբար ջանայիք հանդարտեցնել այն ամեն յուզում և խլրում որ յանուն Ձեր տեղի կունենային և զբաղէիք միայն Ձեր առաջնորդական դաւառի դործերով, ի հարկէ Դուք մեծ մարդու գործ կատարած կը լինէիք, և հետեւաբար, Իզմիրցիք ալ այսօր Ձեռնէ գանգատելու պատճառ չէին ունենար :

Բայց մենք, Սրբազան որ տակաւին դադրած չենք տածելէ յարգանք առ Ձեզ, զի դնահատած ենք Ձեր գրական արժանիք՝ երբ Դուք տակաւին Պ. Դարեղին էիք և ստէպ կը տեսնուէինք աստ, նոյն բարեկամական ազգով կ'առաջարկենք Ձեզ առանց ադմուկի հրաժարիլ Չմիւռնիոյ Առաջնորդութենէ՝ օրհնելով անոնք՝ որ գանգատողներ եղած են Ձեռնէ :

Այսու, Սրբազան, օրինակելի գործ մը կը կատարէք, որով կը վերահաս տատուի Ձեր փնտսեալ վարկը :

Նւ աւելի լաւ կ'ընէք, եթէ Ձեռնէ առաջ դէպ ի Պ. յիս ճանրայ հանէք զՇահպաղեան, որ կոչուած է ի բացատրութիւն Ազգ. Իշխանութենէ, ուրում հնազանդիլ Ձեր, մեր և ամենուն ալ պարտաւորութիւնն է յարգել :

ՕՏԵԱՆԻ ԿԵԱՆՔԻՆ :

(12 Թուէն)

Օտեան կարեւոր պաշտօնով պահ մը բացակայ մնաց Պօլսէն :

Այդ միջոցին տեղի ունեցաւ Պետական հարուածը, որով դադրեցաւ Սահմանադրութեան գործադրութիւնը :

Այս բանին տեղի տուող պատճառն էր Սահմանադրութեան վերաբըննութեան հարկը, զոր կ'զգար ազգեցիկ կուսակցութիւն մը՝ որոյ պեան էր Վսեմ. Սէրվիլէն Եփէնտի :

Ընդհանուր ժողովին մէջ այս մասին ջերմ և բուռն վիճարանութիւն տեղի կունենար և կուսակցութիւն կուսակցութեան կ'ընդհարէր :

Կարնոյ Տ. Յակոբի դաւաճանութեան խնդրը վրայ հասաւ. յիշեալ քահանան զԽրիմեան զրադարտած լինելու ամբաստանութեան ներքեւ կը զըռնէր :

Ինչիւն Մկրտիչ պէյի Քաղ. ժողովը պատիժ անօրենից յիշեալ քահանայի նկատմամբ :

Նոր պէյ Սրբազանի Կոն. ժողովն յուզուեցաւ, իրաւասութեան խնդիր յարոյց եւ կ'ըսէր թէ Քաղ. ժողովն եկեղեցական մը պատժելու իրաւունք չունի :

Քաղ. ժողովն ալ միւս կողմէ կը վստաստարանէր թէ ինք - ժողովը - կը

ԻՆԴԵԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ

Առողջ միտք յառողջ մարմնի կ'ըսէ առածը :

Մաթեմատիքական ճշմարտութիւն մէկ այս :

Յաւալի է սակայն որ այս առածի ճշմարտութիւն տակաւին չէ ըմբռնուած :

Ափրդիտեան և այլ աստեր մանաւանդ մեծ յառաջդիմութիւն կ'ընեն 'ի գաւառս և հարիւր հազարաւոր երիտասարդներ անբնական մահուամբ ժամանակէն առաջ կը մանեն 'ի գերեզման :

Մենք որ բաւական ճանրորդութիւններ ըրած ենք հեռաւոր գաւառներ իսկ, խորին ցաւով և տխուր հաւաքանօք տեսած և այս այս դրած ենք մի քանի յօդուած՝ առաջարկելով կարգ մը վկայեալ բժիշկներու՝ որ հոս չեն կրնար պէտք եղած կերպով դործ ընել՝ երթալ 'ի գաւառս ուր թէ մեծ բարիք կ'ընեն ժողովուրդին և թէ իրենք ալ հանգիստ դրամ կը չահին, որովհետեւ կան բազում վայրեր, ուր հիւանդք բազմի բերման կը ձգուին :

Այս անգամ առիթ կուենանք խօսելու մեր յարգելի բարեկամ Պօղաճեան Մեծ. Բիւզանդէֆէնտի կարի խնամով պատրաստած Իքնապաշտպանութիւն անուն գրքոյկին վրայ, որոյ օգտակարութիւնը ապացուցեալ է :

Ինքնապաշտպանութիւնը կը խօսի մարդկային մտայ, բարոյականին և մարմնոյն վրայ հեշտութեան ըրած հետեւանքներուն՝

Գիշական ակտերու և անոնց դարմաններուն՝

Միզանցքաբարձրման և դազդիտական ակտերու հասուցած անթիւ չարեաց և նոցա դարմաններուն՝

Սերային գործարանաց վիրարութական անդամազնութեան, նոցա կիրառութեանց և կատարած պաշտամանց վրայ, և կը բացատրէ ու կը խօսի թէ ինչ են

Բնախօսութիւն ամուսնութեան, իւր արդեւքներն և իւր պարտականութիւնը, ջլային և ծննդական ակարութիւն, անմարսողութիւն, յիմարութիւն, յօդացաւք, և այլն :

Թէպէտ հանդուցեալ Պ. Արմենակ Հայկունի հրատարակած է Գերեզ-

մանք երիտասարդաց և Գարնան Մաղիկներն անուն գործեր և ուրիշներ ալ թանգամանութիւններ ու հաւաքածոյներ ունեցած են, բայց ասոնց ամենուն կատարեալ գերազանց և օգտակարագոյնն է Պօղաճեան Էֆէնտի Ինքնապաշտպանութիւնը, որ ջերմապէս կը յանձնարարենք իւր փորձեալ օգտակարութեան համար :

Կարծէ որ ամեն ոք՝ մանաւանդ ամեն գաւառացի մէկ օրինակ ունենայ այդ գրքէն, որ կը վաճառի 'ի զին 6 զրշ, և կեդրոնատեղին է Պօլիս, Չաքմաքըրլար եօդուշու, Սաքա չէշմէսիի դէմը, Պօղաճեան Գրատունը :

ԶՈՒԱՐՃԱՒԻՔ

ԱՄՈՒՄՆԱԹՈՂԱԿԱՆ

(12 Թուէն)

— . . .
— Ձեռն խօսիր, ինչո՞ւ չես պատասխաներ, տե՛ս, քեզի համար կուլամ :

— Պատասխանէ .

— . . .
— Խօսէ, նոնոյիկս, սիրունիկս, խօսէ, սիրտս մի՛ հապցներ :

— Ա՛լ բաւական է, հեռացի՛ր քովէս .

— Ի՞նչ հեռանամ, այդպէ՛ս կուղես . . .

— Ո՛չ, մէկդի քաշուէ, թո՛ղ զիս առանձին, կուղեմ մինակ մնալ .

— Լա՛ւ, բայց ինչո՞ւ համար .

— Ինչո՞ւ համար, օ՛, օ՛, պատեւու համար քու անհամ կատակներէդ հասկցա՛ր .

— Քեզ զուարճացնելու համար կ'ընեմ .

— Ի՞մ զուարճութիւնս տյուհետեւ միայն գերեզմանին մէջ է .

— Երբեմն երթալու որոշում կուտայիր, հիմայ ալ մեռնի՛լ կուղես, ո՛չ, ո՛չ, դո՛նէ մի մեռնիր . կուլամ, իւհի՛ւ, իւհի՛ւ, իւհի՛ւ .

— Խնդա՛, խնդա՛, ինչպէ՛ս որ կը խնդաս .

— Ուրեմն խնդամ, հա՛, հա՛, հա՛. ինչպէ՛ս, աղւոր կը խնդամ .

— Ի՛նչեք Առտուծոյ, ա՛լ բուականէ .

— Շատ աղւոր, տյնպէ՛ս չէ՛ .

— Կաղաչեմ, զիս քիչ մը հանգիստ թող .

— Միայն դուն չես, ուրիշ հաւնողներ ալ կան .

— Կը պաղատիմ .

— Դուա կը դնեմ որ շատ կը հաւնին .

— Ոտքդ պագնեմ .

— Բայց տեսնելու ես թէ ինչպէ՛ս կը հաւնին .

— Ա՛լ չեմ գիմանար .

— Հա՛, հա՛, հա՛ .

— Կը նստալիմ .

— Սակայն ինչո՞ւ կը նստանձիս .

— Ծուռնս, շուռնս կ'սպասի .

— Ըսէ որ չ'սպասի, ինչո՞ւ կ'սպասի. յանցանքը իրն է. կրնայ չսպասիլ, ո՛վ կ'ստիպէ զինքը որ սպասի .

— . . .

— Ո՛րչափ անմիտ է շուռնդ որ կ'ըստառի տուանց իրեն սպասէ ըսող մը ըլլալու .

— . . .

— Ինչո՞ւ չես պատասխաներ, մի՞թէ իրաւունք չունիմ .

— . . .

— Դարձեալ չես խօսիր, օ՛հ, ո՛րչափ նախանձուտ են կանայք .

— Պատճառը դուք ամուսինքդ էք որ նախանձելու առիթ կուտաք մեզի,

— Կրնաք չնախանձիլ .

— Օ՛, օ՛, ինչ գեղեցիկ պատասխան .

— Անշուշտ, բայց ինչ եղաւ չունւնէք, ա՛լ չսպասիր, տյնպէ՛ս չէ՛ .

— Դող մ'եղլար, բոլորովին կ'ըստառի .

(Շարունակելի)

ՍԶԳՍՅԻՆ ԺՈՂՈՎ

Կ'երեւայ թէ վերջապէս տարերք ալ իրաւունք կուտան Ատենապետաց Դիւանի պատրաստած ցանկին դէմ բողոքողներուն, կամ չեն ուզեր որ նախորդ Վարչութիւնն երթայ քաշուի բողոքովին, կամ թէ երկու օրական (1) կուսակցութիւններ ալ իրաւունք

(1) Օրական կ'ըսենք, որովհետեւ մեր մէջ սկզբունքի կուսակցութիւններ դրեթէ չկան։ Կարելի է թէ կամ սկզբունք չկան, կամ եթէ կան, կուսակցութիւններուն հետ չեն կրնար հաշտուիլ և կամ թէ կուսակցութիւնք սկզբունքներու հետ հաշտ չեն երթար :

ԱՍԿԷ ԱՆԿԷ

Աման մարիկ, կը վախնամ կոր, նայէ՛, նայէ՛.

— Մի՛ վախնար, աղա՛ս, մի՛ վախնար, զնաստկար կենդանի չէ, Հանգիստաւոր Ապու չն է:

Ախպար, ձերիտէն կը կարգա՛ս կոր.

— ձերիտը ի՛նչ է.

— ձերտ չէ, ձերիտէ լրագիրը.

— Ատ՛ սրն է.

— ձերզվիթներուն օրկանը.

— Ես ձկնորս չեմ որ ուռկանի պէտք ունենամ.

— Ուռկան չըսի, օրկան ըսի.

— Ես տունը եօրզան ունիմ.

— Ամմա տա չաթուրդ. ճիզուիթներուն գործիք լրագիրը.

— Եւ բէք աղէկ, ի՛նչ է եղեր.

— Արեւելին տաժան լմնացեր է.

— Պօշ լաֆ. Արեւելքը տարաւ յաղթանակը, կարգա այս չորեքշաբթի օրուանը, պէրպատ ըրեր ձգեր է. ա՛լ էրէրալու տեղը չէ մնացեր, դուն տահա կեցեր ձերիտէն կըսես. տվոր ձախորդ դատի փաստաբան ըսէ լըմնացուր.

Հապա ձերիտէի հերքումները ի՛նչ են.

— Քիւլտուրայի, կուտե՞ս, կուզես. նէ կեր.

— Ո՛չ, բարեկամ, իմ միտէս նաղիկ է, չի վերցնիր.

Էֆէնտի՛ կը հաճիք ինձ. վարձու տալ ձեր տունը.

— Ինչո՞ւ չէ.

— Բայց սուղ կուզէք եղեր.

— Տարեկանը կանխիկ 40 ոսկի.

— Վար չըլլա՛ր.

Վերջնական է, թ փորտ վար չըլլա՛ր.

— Աղէ՛կ, սակայն դո՛նէ եռամսկայ ընենք.

— Ո՛չ, բարեկամ, բերանս երած է.

— Իրաւունք ունիք, բայց մենք պատուաւոր մարդիկներ ենք, տունն ալ շատ աղէկ կը պահենք, անանկ որ մենէ բէգ խօշիտ կըլլաք.

— Ինչպէս ապահով ըլլամ.

— Փորձով պիտի տեսնաք. մենք անանկ տիխաթ կ'ընենք որ էշեանիս ալ սիկուրթան պիտի դնենք.

— Իշտէ տա չեղաւ, ատիկա ամենին չեմ ուզեր. չիւնքիւ ի՛նչ կելլայ նէ անկէ կ'ելլայ կորս.

Պագիրկան, բաթ լիճան քա՛ջ փարա.

— Է՛, ալ պագալում. դավկա ետքմաիդ. տուտու.

— Սէօլէ պագալում.

— Այաճագան պէշի դուրուչ.

— Նէ՞ սէօլէրսին ծօ՛, օն փարայա օլմը մը.

— Ամմատա թամահքար սին, օն փարա օլմը մը.

— Ես քաջ փարա.

— Իշտէ տէտիք.

— Եօ՞գ, օն փարա վէրէճէքէն վէր.

— Հայտէ պագալում, պուտա սէնին սօզին օլտուն.

Իմացա՛ր, Միւսիւ Միքէ, Նախիջևանի մէջ 130 տարի առաջ տպուած հայերէն Տերեմաք մը կայ եղեր.

— Իրա՛ւ կ'ըսես.

— Հապա, բժիշկ մը գրեր է անցած օր Արեւելքին մէջ.

— Արեւօք հիւանդ է այդ թարգմանութիւնը որ ինքզինքը յայտնելու համար բժիշկի դիմեր է,

— Կ'երեւայ թէ անանկ ըլլալու է.

— Բժիշկը ի՛նչպէս բան է, խեղճին հիւանդութենէն կը հասկնայ որդեօք.

— Ատ ալ խօսք է, համարտանա կան է.

— Ի՛նչէն դիտես.

— Ստորագրութեանը քովը դրած էր.

— Հասկցայ, այդ գիւտը երեան հանելուն հետ իրեն համար ալ բէգլում մը ըրեր է:

ԱՌԹԸ ՄԻ՝ ՓՆԻՅՆԷՔ

Գալ շարաթը չէնկէլով քաշողներ բէգ շատ կան.

Մենք որ բաղդատումս դնած են թ զրչ տալով՝ ալափրանկա հոկա. Վին կ'սղասեն սրտերին թվրալով թէ տրդեօք բաղդը պիտի ժպտի իրենց թէ իրեք խօղով պօշը պիտի նստին.

Մենք խորհուրդ կուտանք որ փոխանակ թ զրչ տալով բաղդատումս զընելու՝ Տպարսնապետ Պիպերեան Մեծ. Կարապետ էֆէնտի բացած վիճակահանութեանը գրուին, որով թէ բաղդերին կ'ընան փորձել և թէ հիւշէն ալ խիստ ընտիր վիպասանութեան մը տէր ըլլալ ամիսը թ զուրուչով:

Դիմել թերթիս տպագրատունը:

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Տիգրանակերտի Գաւ. Ժողովը տեղւոյն Առաջնորդ ընտրեր է Պատր. Փոխանորդ Իւթիւճեան Գեր. Յ. Գէորգ. Մ. վարդապետը և Կրօն. Ժողովն ալ վաւերացուցեր է զայս ընտրութիւնը. Խիստ լաւ. Գեր. Իւթիւճեան արժանաւոր ու պարկեշտ եկեղեցական մ'է, բայց Տիգրանակերտի ընտրութիւնը յարմար չէ, որովհետեւ Ն. Գերապատըութիւն քրդերէն ու արարերէն չգիտէ. բայց աստի՛ իւր ներկայութիւնըն ալ չենք կարծեր թէ օգտակար ըլլայ, վասն զի գիւղացի Ժողովուրդն հացի պատճառաւ է սր կաթոլիկութեան կը դիմէ:

Գեր. Իւթիւճեան թերեւս նշխարք ուտելով բաւականանայ, բայց երբ գիւղացիք իրեն հացի համար դիմեն, ի՛նչ տայ անոնց՝ քարո՞ղ, բայց ատիկա միայն հոգեւոր սնունդ է:

Ուրիշ բան է եթէ առնուազն քանի մը հարիւր ոսկի ալ Տիգրանակերտ զրկուի աղքատներն հոգալու համար: Պատրիարքարանը աղէկ կ'ընէր եթէ կամ Գեր. Դերձակեան Սրբազանէ և կամ աստ դատուող Տիգրանակերտցիներէ տեղեկանար տեղւոյն Ժողովրդեան արդի վիճակը:

ՀԱՅՐԵՆԻՔԸ

Չկայ, դադրեցաւ, ա՛լ չհրատարակուիր ամեն օր:

Հայ եղողի համար ՚ի հարկէ խիստ ախուր պարագայ մ'է այս:

Չենք դիտեր թէ արդեօք Մեքիսեղեկեանք ալ տխրեցան, որ աւելի անոնք պէտք էին տխրիլ, որովհետեւ յիշեալ թերթն ամենայն հաւատարմութեամբ կը պաշտպանէր իրենց դատը և կը ծառայէր ջերմութեամբ:

Ուրեմն ամենօրեայ Հայրենիքի դադարումը մեծ ամօթ պէտք է համարել մանաւանդ Մեքիսեղեկեանց:

Այս դժբաղդ պարագայէ Գեր. Մեքիսեղեկ Սրբազան կ'ընայ աղէկ հասկնալ թէ հասարակաց կարծիքը որ կողմ կը գտնուի:

Սակայն պէտք է ցաւօք սրտի ըսել թէ 10 փարայի թերթի մը դադարումը Ժողովուրդին համար բնաւ պատուաբեր չէ:

Ջերմապէս կը բաղձանք որ վերջաւորն շարունակութեան համար միջոց մը գտնուի:

ԻՏՄԱՆ

ԿԱՄ

ՏԱՃԿԵՐԵՆ

ՄՏԱՄԱՐԶՈՒԹԻՒՆ

Տէր Է. Հրատարակիչ

ՀԱՅ ԳՐԱԾԱՐԱՅ ԸՆԴԵՐՈՒԹԻՒՆ

Սոյն տաճիկներն ընթերցանութեան պիտի չըն որ երեք մասերէ կը բաղկանայ, հոգա- կաւոր Թուրք գրադէտ և Օսմանեան բարձ- րագոյն վարժարանաց ուսուցիչ Ալի Նազը- մա պէյի կողմէ պատրաստուած է ըստ Բէ- լիսիէի գրութեան, և որոյ առաջին մասին տարադրութիւնն տրուէն սոցաւսած լինելով, երկրորդ տարադրութեանն սրժանացած է կա- րեւոր յուշերուով, այն է՝ դժուարութեան բաւերուն բացատրութեամբն:

Սոյն գաղափարն տրուէն Օսմանեանեան, Յունական և Հրեական վարժարանաց մէջ մուտ գտած է գնահատուելով նոցա կրթա- կան տեսչութիւններէն, և գոհութեամբ կը յիշատակենք իւր մեր կրթական ճեպու- թիւնն ևս արժանապէս գնահատելով և Պատ- րիարքարանի կիքովն վարկելով ներմուծած է զայն ընտրեալ գոտադարոց մէջ, իբր Թա- մանեան ընթերցանութեան մէջ հատիկ դա- տալիքն:

Գինն է Ա. մասին 2 դր. Բ. մասին 2 ու դր. և Գ. մասին 3 դր.

Տարադրութիւն յոյժ մաքուր : Աղղային վարժարանաց համար հարի- րին 20 շէղէ կըլլայ :

ԻՆԲԵՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ

Ընդդէմ գիշտական, պոպոկական (ֆրէնդի) միջանցքորոգութեան (պէլ սոսդուզու) և այլ անիրագրեան հիւանդութեանց :

Գին 6 ՂՐՈՒՇ

Կեդրոնատեղին է Պօղոսեան գրա- տուէն, Չնգմագ ճըլար-եօգուշ, Թ. 56: Սոյն առողջաբանական գործն իւր բազմօգուտ և հետաքրքրաշարժ պա- րունակութեամբ կը գերազանցէ ցարդ այս նիւթիս վրայ հրատարակեալ հին գործերն, (օրինակի համար Հայ- կաւրի և Պաղտատեանի (Աշնան աե- րեւերն, Գերեզմանք երկտասարդ այն, Գաղտնիք Բնութեան այլովքն հան- գերն) այնպէս որ այդ կցկտուր գրքե- րը կարդալու փափաքողն, եթէ կար- դայ ինքնապաշտպանութիւնն, ոչ ևս պէտք պիտի զգայ անոնց :

Գաւառեւերէն ո՛վ որ 7 դրո չի իւր- թոտարական գրոյ՝ զրկէ, յաջորդ փոստով անմիջապէս կ'ստանայ մի օրի- նակ :

ՊԱՐԵՆԻՍԻՈՐ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹԻՒՆ

ԲԱՐԻՍ ՔԱՋԻԱԼԱՐԸ

Թարգմանիչ Տ. Թ. ՕԼԱՆԱՆ Հրատարակիչ Կ. ՊԵՊԵՐԵԱՆ

Այս հետաքրքրական վէպին առա- ջին հասարակ լոյս ընծայուած ըլլա- լով՝ երկրորդին հրատարակութեանը ձեռնարկուած է. տմնական բաժա- նորդակնն է Պօղոս համար 5 և դա- ւաւաց համար 6 դահեկան Բաժանորդ- դրուիլ փափաքողը պարտին զիմեւ եռուստփեան խան վերնայարկ թիւ 6 Կ. Պիպերեան էֆէնտի տպարանը, Պահճէ զարու սուճի Պօղոս և Յակոբ աղայից խանութները և ամեն լրագրա- վաճառաց :

ՏՅՈՐԵՆ Է. Խմբագիր Արտօնատէր Մ. ԳԱՓԱՄԱՃԻԱՆ Մ. Յ. ՄԵԼԻՔԵԱՆ

ՏՊԳՐՈՒԹԻՒՆ Կ. ՊԵՊԵՐԵԱՆ Եռաստփեան խան վերնայարկ թիւ 6

— 446 —

— Կինս. — ըսաւ նախկին վաճառականն մտահոգ. — Սակայն քիչ յառաջ վատահեցու- ցած էիր զիս թէ Մարիան վանք քաշուիլ կ'ու- ղէր: Երեկոյթին պատրաստութիւններով՝ խեղ- քըս գլխէս պայած ըլլալուն ոտն լնդերոյն վը- րայ աղջկիս հարցաքննել միտքէս չանցաւ, խօսքիդ հաւատացի, և այս իրիկուն այդ օրե- րան պաշտօնապէս պարոն Մարիային խոստա- ցայ: Բայց եթէ, դժբաղդաբար, սուտ խօսե- ցար ինձ. — յաւելցուց ևս քան զիս մտահոգ. — եթէ սուտ խօսեցար ինձ. . .

— Լաւ կը ճանչնամ քեզ, ի՛ժ. — գոչեց տիկին ժուֆրուա իւր ամուսնոյն ըսածն ընդ- միջեւով և իւր խօսքն պառաւ ուղղիւս ուղղե- լով. — պէտք է որ ամեն տեղ քու խառնակ- չութիւնդ ընես:

— Բայց նախատէ չ'ըսի, այլ սա ըսէ ինձ թէ Մարիան վանք մանեւ կ'ուղէ՞ թէ չուղէր: ապա թէ ոչ. . .

— Ապա թէ ոչ. — ի՞նչ ըսաւ տիկին ժուֆ- րուա օրդարար. — անմենք, պարոն, տար- տեցէք ձեր խօսքն. . . ապա թէ ոչ ի՞նչ. . .

— Աստուած վկայ ըլլայ որ այս ամուս- նութիւնն կը խզեմ:

— 447 —

— Կը համարձակի՞ր: — Այո՛, այդ ամուսնութեան կատարուիլն օժտէն կախումն ունենայ: Ե՛ս աղջկանս մին կողմը տեմ որպէս զի միւսն հարստացնեմ: Յիմար ևս դու, կին: Հարստութեանս տէրն ես եմ: Դիւրին չը վտանկեցայ ես զայն: Իբր ընտան- եաց բարի հայր մը պիտի դորձածեմ զայն: Լաւ կիմանաս զայս, կինս:

— չ'ը, հարստութիւնդ մինակ քեզի կը վերաբերի: Ի՞նչ ըսել կուզես, այդ հարստու- թիւնդ շահելու համար քեզ բնաւ չ'օգնեցի: Միթէ առաւօտեան ժամը ութէն երեկոյեան մինչև ժամը տասը դրասենեակը չ'էի մնար: Վաճառամար չ'էի զբաղէր: Տեղադրեցի չ'էի բռներ և դրամակղդ ձերքս չ'էր: Միթէ դոր- ծերդ կարգի կանոնի չ'էի դներ: Եթէ մեր ըրած շահերն շահու դնելու համար տեղ պանոզն, որովհետեւ դու քու այդ միամտու- թեամբդ ամեն մարդու վատահոյթիւն պիտի ընէիր: և դրամադլուխդ վտանգի պիտի են- թարկէիր: Միթէ քեզի հետ ամուսնանալով՝ քու դրամիդ կրկինն օժիտ չը բերի քեզի: Եւ այս օր ապերախտութեամբ կը համարձակի